

Մեր բնութիւնն ընդունակ է այս բանին, բայց սէ երբէք առանց զգացման ճշմարտասիրութեան: Ոչ միայն պատմութիւնն, այլ նոյն իսկ մեկնութիւնն, եթէ աստուածաբանական և քրիստոնէական ճշմարիտ սիրով չէ մեկնուած, ունայն է բոլորովն, ինչպէս որ ունայն է, եթէ առանց իմաստի և լեզուագիտական արուեստի մեկնուած լինի: Ոչ ապաքէն պատմութիւնն եւս մեկնութիւն է իրողութեանց և գործոց մարդկան: Միտն է որ կը կենդանացնէ մեր մտածմունքներն և միմեանց կը մօտեցնէ. ուր որ սիրան մասն չունի, նիւթերն միշտ բաժանեալ կը մնան: Հեռուէն տեսնուած ապարանքն՝ կ'երեւի իբրև մեծազանգ քարակոյտ մի կամ հողակոյտ. բայց որչափ կը մօտենամք, այնչափ կ'երեւին ապարանքի մասերն, սիւներն և ճարտարապետութեան կարգ ու կանոնն: Երբ իրերն կը տեսնեմք առանց սիրոյ, կը տեսնեմք միայն հեռուէն, այսինքն կը տեսնեմք խառնաշփոթ: Հետեւապէս ով որ կ'ասէ թէ առանց զգացման կարելի է անաչտու պատմութիւն գրել, շատ կը սխալի: Վասն զի պատմութիւնն բացատրութիւն է անցից և իրողութեանց, և ինչպէս կարելի է իրերն հասկնալ առանց զգալու և նոցա վերայ իշխելու: Զշալ և հասկնալ կը նշանակէ իշխել: Պատմագիրն չէ կարող իշխել իրողութեանց, եթէ նոցա խորն թափանցած չէ ոչ միայն մտք, այլ և սրտով: Պատմութիւնն կամ պատմագրի երկն նորա սրտի և մտաց պատկերն է: Ամեն իրողութեանց հետ ձուլուած է պատմագիրն իւր յառկական պատկերով, ամեն անցից մէջ խառնուած է նորա հոգին: Ի զուր է, եթէ ջանայ պատմագիրն բաժանել զինքն իրողութիւններէն: Ինչ եղանակ որ բռնէ, ինչ ձեւ որ ընդու-

նի, նա միշտ պէտք է միածոյլ երեւի իւր պատմածին հետ, և ամենէն ճրջ մտքիտ պատմագրութիւնն այն է, որոյ մէջ պատմագրի մտքն ու սիրան միանգամայն կ'երեւին: Հետեւապէս քանի որ պատմութիւնն նախնի դարուց լոկ ժամանակագրական անցից նըկարագրութեանն փոխուած է ՚ի գիտութիւն, պէտք է որ գիտութեան ամեն պայմաններն ունենայ, այն է, դէպքերն քննուած և կշռուած, իրերն պարզուած, անցից յաջորդ և հետեւորդ պարագայներն իրարու հետ կապուած, և, ամենէն աւելի, պատմագրի զգացմամբ աղետաղետուած: Այս պայմաններէն զուրկ պատմութիւնն ներկայ դարուս մէջ չունի ճշմարիտ պատմութեան արժանաւորութիւն:

ԱԶԳԱՅԻՆ ԿՏԱԿԱԳԻՐԻՔ

Մեր Ազգին մէջ գտնուած են միշտ յիշատակաց արժանի մարդիկ, որք զունազան ժամոնակ կտակաւ գումարներ թողած են յօգուտ ընդհանուրին: Սոյն կտակեալ գումարներէն շատերն աչտուրջ կտակակատարաց ձեռքով գործադրուած են բարեպաշտ կտակարարաց նպատակին համեմատ. բայց դժբազդաբար շատերն եւս անգործադիր մնալով է որ յուժնդէտս վասնուած են և է որ կորուսուած: Մեր նպատակն չէ այս տեղ յականէ յանուանէ թուել Ազգային Կտակարարներն ու Կտակագրերն, որք իրենց յարակից դէպքերով գրեթէ Ազգային կտակաց առանձին պատմութեան նիւթ կը կազմեն. այլ միայն կամիմք ասել թէ որչափ որ անմահ երախտագիտութեան արժանի են ազգասէր կտակարարքն, նոյնչափ եւս հաւա-

տարիմ' համարատու կտակակատարքն
 Նորու մեր ձեռքն հասաւ 1872
 ին Տիֆլիսի մէջ տպագրուած մրտեա
 րակ, որ կը պարունակէ հանգուցեալ
 Յովսէփ Էֆէնդի սնցի համառօտ կէն
 ստգրութիւնն պատկերով հանդերձ,
 նորա կտակագիրն և կտակակատարաց
 10-ամեայ մանրամասն հաշուեցոյցն,
 Սոյն տետրակն յայտնապէս ցոյց կը
 տայ թէ հանգուցելոյն բարեխիղճ կը
 տակակատարքն Պ Պ. Գրիգոր Իզմիր
 եանց և Աւետիք Սվէշնիկեանց ինչ
 գովելի աշխատութեամբ ծառայած են
 հանգուցեալ կտակարարի կենդանի
 նպատակին, և թէ ինչ ինքնայորդոր
 համարատուութեամբ հրատարակած
 են իրենց հաշուեցոյցն ՚ի գիտութիւն
 Աղլին: Փափագելի էր որ սոցա գեղե
 ցիկ արարքն օրինակ լինէր ամեն կը
 տակակատարաց: Մէք շատ կտագրեր
 կորդացած ենք, բայց գրեթէ առա
 ջինն է որ կտակակատարաց դործա
 նութեան հաշուեցոյց կը տեսնենք:
 Մէք այնպէս գիտենք, որ ամէն
 ազգային կտակակատարք պատասխա
 նատուութի պարտաւորութիւն ու
 ժենին Աղլին առջև, սակայն շատ ան
 գամ ոչ կտակակատարք ինքնին գգա
 լով և ոչ Աղլային վարչութեանց կող
 մէն պահանջուած լինելով այն մեծ
 պարտաւորութիւնն գողցես ՚ի շարս
 պարտաւորութեանց համարուած չէ,
 ուստի և շատ կտակներ, ինչպէս ասա
 ցինք, կամ ապարդիւն մնացած են և
 կամ ՚ի կորուստ մատնուած: Կեցցեն
 ուրեմն հայրենասէր Իզմիրեան և Սվէշ
 նիկեան, որք իրենց արգիւնաւոր հա
 մարատուութեամբ՝ կտակակատարու
 թեան գեղեցիկ տիպար կը հանգիսա
 նան Աղլին մէջ:

ԺԱՄԱՆԱԿԱՆ ԲՆԱԿՆԵՐ

—Բէթղէ հեմի վարագուրաց ինչպէ
 րն տակաւին նոյն դրութեան մէջ է:
 Կստուած վարագոյցն նսինականին
 չափէն շատ մեծ լինելուն և միանգա
 մայն պոսպակոն նշաններ կրելուն հա
 մար՝ բողբոջ տակ է մեր և Յունաց
 միաբանութեանց կողմէն: Լատինք կը
 յամառին և Տէրութեան կողմէն տա
 կաւին վերջնական հրաման չեկու ներ
 կաց վարագուրի բարձման և նոր, շա
 փաւոր և օտարասի նշաններ չը կրող
 վարագուրիմը կախման համար: Յայտնի
 է որ մեր պատկերներէն մէկն տակա
 ւին կատուած չէ: Վասն զի մեր պատ
 կերի տեղն Լատինք պատկեր կախած
 են, որ բողբոջին իրաւանց բոնաբա
 րութիւն է: Այս խնդիրն եւս վարա
 գուրի խնդրոյն յարակից է և աւակա
 ւին կը շարունակի: Թէպէտ և տե
 ղոցս Պուսակաւն առաջարկեց ուրիշ
 տեղէ պատկեր մի կախել, բայց մեր
 պատկերի տեղն յաիշտակուած լինե
 լուն համար՝ առաջարկութիւնն մեր
 ժուեցաւ:

—Ի՛նչ ամսոյս, որ էր ՚ի 6՛ն Ապրի
 լի ըստ նոր տուժարի, Լատինք Ծաղ
 կաղարդի հանդէս կատարելու ժամա
 նակ ՚ի Բէթղէ հեմ առիթ տուած են
 մեծ խոսիութեան: Հանդիսաւոր թա
 վարն չըջեցուցած են այնպիսի տեղէ,
 որոյ իրաւունքն Հայոց և Յունաց մի
 այն կը պատկանի: Յունաց լուսարա
 րն ընդ տաաջ ընելով կամեցած է ար
 գելուլ, բաց թափօրականք վերար
 կուներու տակ բիրեր և գրպանաց
 մէջ քարեր ունենալով յարձակած են
 Յոյն լուսարարի վերայ, աղաղակն
 մեծնալով Յունաց վանքէն ուրիշ մի
 արաններ ևս յօգնութիւն վազած են,
 և ընդգիմադրութեան ստասիկ միջոցին
 թափօրականներէն մին, Յոյնին ձե